Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 09 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով << քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (30.01.2009թ. մտից թիվ 4-27) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթի սահմանադրականությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 4-րդ մասի համաձայն անհատական դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ, որի անհրաժեշտության վերաբերյալ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը քաղ. Ռուբեն Թորոսյանի՝ 08.01.2009թ. մտից թիվ 4-1 նույնաբովանդակ դիմումի քննության ընդունումը մերժելու վերաբերյալ իր՝ 23.01.2009թ. որոշմամբ մանրամասն անդրադարձել է, նշելով նաեւ, որ դիմումատուն բարձրացնում է օրենքի դրույթի սահմանադրականության հարց («Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդված), սակայն փաստորեն փորձում է առաջնորդվել նույն օրենքի 74 հոդվածի (ընտրական վեճեր) կանոններով՝ միջնորդելով նաեւ իրեն ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից («Պետական տուրքի մասին» << օրենքի 22 հոդվածի «ժդ» կետ), որը չի բխում «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27 եւ 69 հոդվածների պահանջներից:

Դիմումատուն փաստորեն միեւնույն հարցով եւ նույնպիսի հիմնավորումներով կրկին դիմել է սահմանադրական դատարան՝ անտեսելով դատարանի 2-րդ դատական կազմի 2009 թվականի հունվարի 23-ի որոշումը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չբավարարելով նաեւ պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԵՂՄԱԳԻՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ